ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՄ նոր Թվինինգ ծրագիրը կշարունակի հարմոնիզացնել հայաստանյան վիճակագրությունը ԵՄ ստանդարտների հետ**

**2015 թվականի սեպտեմբերի 15-ին** Հայաստանում պաշտոնապես կմեկնարկի ԵՄ Թվինինգ ծրագիրը, որի նպատակն է արդիականացնել հայաստանյան վիճակագրությունը: «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական համակարգին - II փուլ» Թվինինգ ծրագիրը պաշտոնապես կբացվի ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ՝ Ստեփան Մնացականյանի կողմից:

Եվրոպական միության կողմից 1,000,000 եվրո բյուջեով ֆինանսավորվող ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը՝ ինստիտուցիոնալ Թվինինգ ծրագրի միջոցով արդիականացնելով պաշտոնական վիճակագրության հայաստանյան համակարգի կոնկրետ տարրեր: Սույն նպատակը կիրագործվի՝ ներդնելով ԵՄ ստանդարտներին համապատասխանեցված համապարփակ տարածման ռազմավարություն և կազմման մեթոդաբանություններ: Ծրագրի իրականացման ընթացքում առանցքային կլինի վիճակագրական տեղեկատվության արտադրման նպատակով առկա վարչական ռեգիստրների օգտագործումը:

Այսպես, ծրագիրը կաջակցի Հայաստանին արտադրել ԵՄ մեթոդաբանությանը համապատասխան վիճակագրություն, հետևաբար վիճակագրությունն ուղղակիորեն համադրելի կլինի եվրոպական երկրների վիճակագրության հետ, ինչպես նաև աշխարհով մեկ: Բարելավված վիճակագրությունը հետագայում կապահովի արժեքավոր տեղեկատվություն հայաստանյան լայն հանրության և մասնավորապես, քաղաքականություն մշակողների համար:

Ծրագրի իրականացման ժամանակահատվածն է 08.08.2015-07.08.2017թթ.: Ծրագրի ակնկալվող արդյունքներն են.

- Մշակված տարածման ռազմավարություն, սպառողների ուժեղացված ներգրավվածություն և տարածման համակարգի ընդհանուր բարելավում
- Կենսական վիճակագրության համար բարելավված հավաքագրման մեխանիզմներ և միգրացիայի վիճակագրության վերակազմակերպված համակարգ
- Հաշվարկված և հրապարակված աշխատանքի գին, աշխատանքի գնի ինդեքս, ինչպես նաև վաստակների վերաբերյալ կառուցվածքային վիճակագրություն
- Ներդրված, հաշվարկված և հրապարակված սոցիալական բացառումների վիճակագրություն
- Ներդրված և հրապարակված նորարարական վիճակագրության մեթոդաբանություն
- Ջրի կազմված հաշիվներ

**Ամսաթիվ՝ սեպտեմբերի 15, 2015թ.**
**Ժամը՝ 13.00**
**Վայրը՝ Երևան, Իտալիայի փողոց 1, Կոնգրես հյուրանոց, Հանդիսությունների սրահ**
**Լրացուցիչ տեղեկություն**
**Պարոն Պիտեր Բոնստեդ Անան Հանսեն, Թվինինգի մշտական խորհրդատու, Դանիայի վիճակագրություն, pah@dst.dk**
**Տիկին Անահիտ Սաֆյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ, info@armstat.am**

Սույն ծրագիրը ֆինանսավորվում է ԵՄ կողմից

Հայաստանում ԵՄ պատվիրակություն http://eeas.europa.eu/delegations/armenia

Ծրագիրն իրականացվում է Դանիայի վիճակագրության և Ֆինլանդիայի, Իտալիայի, Լիտվայի վիճակագրությունների հետ համագործակցությամբ:

Ծրագրի շահառուն է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը:

Եվրամիությունը կազմված է 28 անդամ երկրներից, որոնք որոշել են աստիճանաբար միավորեն իրենց փորձառությունը, ռեսուրսները և ճակատագրերը: Ընդլայնման 50 տարվա ընթացքում նրանք կառուցել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման գոտի՝ միևնույն ժամանակ պահպանելով մշակութային բազմազանությունը, հանդուրժողականությունը և անհատի ազատությունները:
Եվրամիությունը նպատակ ունի կիսել իր նվաճումները և արժեքներն իր սահմաններից դուրս գտնվող երկրների և ազգերի հետ: